

336.3

Խ-11

Խ.Ս.Զ.Ս. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԿԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

(ԿՈՆՍՊԵԿՏ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀԱՄԱԶԱՅՆԵՑՎԱԾ Ե Հ. Կ. Կ. (Բ.) Կ. Կ.
ԱԳԻՏ-ՊՐՈՊ. ԲԱԺՆԻ ՀԵՏ

11 SEP 2013

1003
13470

27923

3363
ju-11

17 FEB 2010

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ 2-ՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

(Կոնսպեկտ գեկուցումների համար)

Համաձայնեցված է Հ. Կ. Կ. (ը)
Կ. Կ. Աղիտ-Պրոպ. Յենթարաժնի հետ:

Խ. Ս. Հ. Մ. Ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառում մենք մեծ նվաճումներ ունենք:

1. Վերջին տարիների ընթացքում ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառում մեծ նվաճումներ են ձեռք բերված: Մենք ունենք խոշոր արդյունաբերություն և յեկեքտրաշինարարության արագ աճում, տրանսպորտային տնտեսության զարգացում, քաղաքների և արդյունաբերական կենտրոնների շինարարության աճում: Գյուղական տնտեսության մեջ նկատվում է տեխնիքական մշակույթների ցանքսերի ընդլայնում, գյուղացիության դաշտամշակման նոր ձևերի անցնելը, գյուղական տնտեսության ուժեղ մեքենայացում, գյուղատնտեսական կոոպերացիայի լայն զարգացում և կոլտնտեսական շինարարության վերելք: Հետևյալ թվերը պարզ խոսում են մեր նվաճումների մասին տնտեսական շինարարության մեջ:

1924-25 թ. ամբողջ արդյունաբերության արտադրանքների արժեքը կազմում էր համարյա 5 միլիարդ ո. (նախապատերազմյան գներով). 1926-27 թ. այդ արժեքը հասնում է մինչև 8 միլիարդ ուրբլու:

1927-28 թ. ժողովրդական տնտեսության բոլոր արտադրանքների արժեքը (ներառյալ և գյուղատնտեսությունը) բարձրացել է մինչև 20 միլիարդ ուրբլու: 1924-25 թ. վեց միլիարդ ուրբլու գինաց



1924-25 թ. աշխատավարձի ֆոնդը համապատասխան
չափով 3 միլիարդ 700 միլիոն ռուբլուց բարձրացել է
1926-27 թվին մինչև վեց միլիարդ ռուբլի:

ԲԱՅՑ ՅԵՎ ԱՅՆՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱՑՎԱԾ

2. Չնայած ձեռք բերած նվաճումներին, մենք, բայց
և այնպես, չենք վերացրել լրիվ անտեսական բոլոր դժ-
վարությունները, վորոնց հետ մենք ստիպված չեղանք
բաղկվելու: Ընթացիկ տարում հացամթերման բնագավա-
ռում մենք ունեյինք առանձնապես սրված դժվարություն-
ներ, վորոնք առաջ բերին հացի պակասություն քաղաք-
ներում և դեպի արտասահման արտահանության կատա-
րյալ դադարեցում: Այս հանգամանքն, իր հերթին ստիպեց
մեզ կրճատել արտասահմանից ներմուծվող արդյունաբե-
րության հալթալթման համար անհրաժեշտ սարքավորման
և հումուլթների ծրագիրը, քանի վոր մենք արտասահմա-
նանից վորևե բան կարող ենք ներմուծել այն վալյուտա-
լի հաշվին, վորը շահվել է արտահանությունից:

3. Հացի հետ կապված դժվարությունները կայա-
նում են գլխավորապես նրանում, վոր հացի արտադրու-
թյունը մեզ մոտ ավելի դանդաղ է աճում, քան թե հացի
պահանջը: Արագ աճող արդյունաբերությունը, աճող քա-
ղաքները և արդյունաբերական կենտրոնները տարեց տա-
րի առաջադրում են հումուլթի և մթերքի մեծ պահանջ:
Այն ինչ գյուղական տնտեսությունն արդյունաբերությու-
նից ավելի դանդաղ զարգանալով, չի կարողանում բավա-
րարել այդ պահանջը: Կս առավել, վոր գյուղացիությունն
այժմ, շնորհիվ իր բարեկեցության բարելավման, ինքն է
սպառում իր արտադրանքի մեծ մասը, քան թե սպա-
ռում եր առաջ: Միևնույն ժամանակ և արդյունաբերա-
կան ապրանքների գծով մենք չենք կարողացել վերացնել
ապրանքալին սովը, վոր մենք զգում եյինք վերջին բոլոր տա-

1260 3040

րիներում: Չնայած նրան, վոր մեզ մոտ արդյունաբերու-
թյունն ավելի արագ է աճում գյուղական տնտեսությու-
նից, բայց և այնպես նրա աճումը բավարար չե նրա
համար, վորպեսզի բավարարե գյուղական և քաղաքային
բնակչության կարիքների և պահանջների ել ավելի արագ
աճումը:

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե

4. Այս տնտեսական դժվարությունները ստիպում
են Խորհրդային Միության լարել իր բոլոր ուժերն ել
ավելի ամրացնելու և բարձրացնելու ժողովրդական տըն-
տեսությունը:

Վորպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում վերաց-
վի սովը և շուկան հալթալթվի բավարար քանակով ար-
դյունաբերական ապրանքներով, լավ վորակի և աժան,
անհրաժեշտ է կառուցել մի շարք ֆաբրիկաներ և գոր-
ծարաններ և վերասարքավորել գործող ֆաբրիկաները
նոր կատարելագործված մեքենաներով: Միաժամանակ
նույն տեմպով պետք է զարգացնել և գյուղական տըն-
տեսությունը, վորը հանգիստանում է արդյունաբերության
համար հումուլթ և ապրանքներ հալթալթողը մի կողմից,
և արդյունաբերական ապրանքների հիմնական սպառողը —
մոտ կողմից:

Գյուղական տնտեսության զարգացման համար և ա-
ռանձնապես հացաբույսերը պետք է՝ առաջինը, ապահովել
մանր և միջակ անհատական տնտեսությունների արտադ-
րողականության հետագա վերելքը, այս բոլորը լախորեն
ընդգրկելով կոոպերատիվ կազմակերպություններում, չե-
կրորդ, զարգացնել գյուղական անհատական տնտեսու-
թյունները խոշոր կոլեկտիվների վերածելու աշխատանքը,
չեբրորդ, զարգացնել չեղած Խորհրդային տնտեսություն-
ները և հիմնել նորերը:

Գյուղական տնտեսութեան զարգացումը և ամրա-
պնդումը նշանակալից չափով կախված է արդշունարե-
րութեան աշխատողների աճումից, փորձը պատրաստում
են գյուղատնտեսական մեքենաներ և կատարում են գյու-
ղատնտեսական արտադրանքների վերամշակութունը:

Ապա հերթի չէ կանգնած մեր տրանսպորտային տրն-
տեսութեան բարելավման հարցը: Մեզ անհրաժեշտ է
համեմել ինչպես արդշունարեութեան արտադրանքներ տե-
ղափոխութեան ուժեղացման նույնպես և առանձնապես
գյուղատնտեսական մթերքների, փորովհետև ներկայումս
գյուղական տնտեսութեան ահագին քանակութեամբ մթերք-
ների, տրանսպորտի վատ փիճակի պատճառով չեն հաս-
նում շուկաները և գյուղացիութիւնը տրանսպորտային
տնտեսութեան հետամնացութեան և չհարմարեցման պատճա-
ռով կորցնում է հսկա գումար: Վերջապես, մեր առաջընդհուպ
կանգնած են գյուղի և քաղաքի բնակարանային շինարա-
րութեան ընդարձակման խնդիրները, կոմունալ տնտե-
սութեան, գյուղական և քաղաքային նոր հիվանդանոցնե-
րի, դպրոցների, տեխնիքական կրթական հիմնարկութիւն-
րի կառուցման անհրաժեշտութիւնը և այլն:

Յերկրի ինդուստրացման ուժեղացման առնակից նշա-
նակալից չափով կախված է և գործադրկութեան (անգոր-
ծութեան) թուլացումը, փորովհետև կապիտալ շինարարու-
թիւնը, առանձնապես նոր յերկաթուղային ճանապարհ-
ների և խճուղիների, նոր շենքերի կառուցումը, ինչպես
նաև նոր ֆաբրիկաների և գործարանների գործի պցելը
կը պահանջեն անգործների նոր կադրերի ներգրավում աշ-
խատանքի մեջ: Ինդուստրացման հետ միաժամանակ կը
վերանա նաև անապաստանութիւնը — պատերազմի, քաղ-
ցի և ավերման այս ծանր ժառանգութիւնը:

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ--ՅԵՐԿԱՐԱՏԵՎ ՊՐՈՑԵՍ Ե ՅԵՎ ՊԱՀԱՆ- ՋՈՒՄ Ե ԲԱԶՄԱՄԻԼԻԱՐԴ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

5. Ժողովրդական տնտեսութեան ինդուստրացման

4

խնդրի իրագործումը սկսված է վաղուց և այս ճանա-
պարհին արդեն քիչ նվաճումներ չեն ձեռք բերված: Ներ-
կա մոմենտում ավարտված են մի շարք խոշոր կառու-
ցումներ — Վոլխովստրոյ, Կաշիրա, Շատուրկա, Զագես,
մի շարք գործարաններ և ֆաբրիկաներ և այլն: Մենք
ունենք կառուցումների մի մեծ շարք, փորձը սկսված
են. բայց դեռ ավարտված չեն Դնեպրոստրոյ, Թյուրքեսո-
Սիբիր յերկաթուղային ճանապարհը, Ստալինգրադի տը-
րակտորի գափոզը, Հյուս. Կովկ. գյուղատնտեսական մե-
քենաների գափոզը և այլն): Մենք հաջողութեամբ սկսե-
ցինք գյուղական տնտեսութեան մեքենայացումը և տրակ-
տորիկացիան: Մենք ընդարձակեցինք, վերակազմեցինք
մի շարք ֆաբրիկաներ և գափոզներ, ներգրավեցինք բուն-
փորների և ծառայողների նոր կադրեր: Կապիտալ ներդ-
րումները տնտեսական շինարարութեան մեջ տարեց տա-
րի աճում են: Վերջին յերեք տարում պետական արդշու-
նարեութեան և երեքտրիֆիկացիայի մեջ ներգրված է
մոտ 3 միլիարդ 800 միլիոն ռուբլի. շոշափելի կապիտալ
ներդրումներ տեղ ունեն նաև տրանսպորտի, գյուղական
տնտեսութեան, բնակարանային և կոմունալ շինարարու-
թեան գծով:

Ժ. Տ. Գ. Խ. ստուգողական հաշիվներով յեկող տար-
վա արդշունարեութեան և երեքտրանտեսութեան հա-
մար կապիտալ աշխատանքները պիտի կազմեն մոտ $1\frac{1}{2}$
միլիարդ ռուբլու մի գումար: Յեկող տարի տրանսպորտի
կապիտալ աշխատանքների համար կը պահանջվի մոտ
700 միլիոն ռ. ծախք: Հետագայում ինդուստրացման ծախ-
քերը պիտի աճեն, փորովհետև հերթի չեն գրվում ել ա-
վելի մեծ կառուցումներ, փորձը կարելի չէ իրականաց-
նել միայն մի քանի տարվա ընթացքում և մեծ ծախքերի
դեպքում: Մի խոսքով, ինդուստրացումը մեծ գործողու-
թիւն է, փորը հաշված է յերկար տարիների համար՝
բազմամիլիարդ ներդրումներով:

5

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄՆ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄՈՒՄ Ե ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Յեթե սահմանափակվենք միայն այն միջոցներով, վորոնք կարող են բաժին հանվել պետական բյուջեյով նորմալ չեկամուտներից և յեթե նույնիսկ նրանց ավելացնենք արդյունաբերության կուտակումները, այն դեպքում ինդուստրացման գործն առաջ կընթանա շատ դանդաղ քայլերով: Նույնիսկ բյուջեյի առավելագուցն լարման դեպքում բաժին հանել նրանից ինդուստրացման ծախքերի համար շոշափելի գումարներ՝ հնարավորություն չկա, վորովհետև նորմալ չեկամուտներն ըստ բյուջեյի (հարկերը, տրանսպորտի, արդյունաբերության, պետական չեկամուտները և այլն (լրիվ ծախսվում են կառավարչական պետական անհրաժեշտ ծախքերի վրա) պետական ապարատի պահպանումն, լուսավորություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն բանակ և այլն): Ուստի և ինդուստրացման արագացման համար պետությունը դիմում է արտակարգ չեկամուտների՝ պետական փոխառությունների: Փոխառությունների չեկամուտը մտցվում է բյուջեյի չեկամուտային մասի մեջ, բայց ծախսվում է առանձնապես տնտեսական շինարարության ֆինանսավորման և ինդուստրացման գործի վրա:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՋ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԵՆ

7. Արտասահմանյան փոխառությունները մեզ համար հնարավոր չեն, համեմատյալ դեպս մոտիկ ապագայի համար: Կապիտալիստական պետությունները բոլորովին ել չեն շահագրգռված այն բանով, վորպեսզի Խորհրդային Միությունը, զարգացնելով իր արդյունաբերությունը, թուլացնե իր կախումը կապիտալիստական չեղելիներից և սրանով ել ավելի ամրանար նրանց առելի խորհրդային

6

իրավակարգը, վորի գոյությունը արտասահմանյան պրոլետարիատի համար հեղափոխական որինակ է: Արտասահմանյան կապիտալիստները թերևս համաձայնելին մեզ փոխառություններ տրամադրելու, յեթե մենք մեր հերթին համաձայնելինք ընդունելու այն պայմանները, վոր մեզ առաջադրվում են: Պարզ է, վոր Խորհրդային իշխանությունը չի կարող ընդունել այնպիսի պայմաններ, վորոնք ընկնելին բանվորների և գյուղացիների վրա վորպես ծանր լուծ:

Մեր հարաբերությունների ամբողջ ընթացքում արտասահմանի հետ մենք ստացել ենք համեմատաբար փոքր վարկեր արտասահմանում գնված ապրանքների համար:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԸ ՀԵՆՎՈՒՄ ԵՆ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

8. Ուստի և, դիմելով փոխառության, մենք պետք է միայն հույս դնենք մեր ներքին շուկայի վրա: Ով է կազմում մեզ մոտ այդ ներքին շուկան: Բուրժուազիան մեզ մոտ փոքրաթիվ է և չնչին դեր է խաղում: Ուստի և մեզ մոտ պետական փոխառությունների սնունդ աղբյուրը կարող է ծառայել. գլխավորապես, աշխատավոր լայն մասսաների խնայողությունները: Խորհրդային պետությունն ամենից առաջ նրանց նկատի ունի, բայց թողնելով իր ներքին փոխառությունները, վորոնք դառնում են այդ իսկ պատճառով մասսայական փոխառություններ:

Բանվորական և գյուղացիական մասսաների բարությունների ընդհանուր աճման հետևանքով չեղկրում գոյացել են վորոշ խնայողություններ: Սակայն, պետությունը, բայց թողնելով փոխառությունը, դիմում է վոչ միայն այն խնայողություններին, վորոնք կան, այլ և այն, վոր դեռ կարող է կուտակվել: Պետական փոխառությունների արիվացիաների համուրդով գնումը հնարավորություն է

տալիս աննկատելի կերպով խնայել, անձնական բյուջեից աննկատելիորեն կտրելով ի հաշիվ ավելորդ և չերբեմն եւ փաստակար ծախքերից, ինչպես որինակ ողու ծախքերից և այլն:

Դատապարտելու վոչինչ չկա, չերբ աշխատավորը խնայում ե և չերբեք ել չի հակասում ամբողջ աշխատավորութեան շահերին: Բաց թողնելով փոխառութեանները, պետութեանը չենում ե հենց իրենց աշխատավորների շահերից, փորովհետեւ փոխառութեանների ձեռք բերելն ունում ե բարձրներին և գլուղացիներին բարեկամելու իրենց պրութեանը: Մենք չենք հասել բարրութեան այնպիսի մակարդակի, վորի դեպքում յուրաքանչյուր բանվոր կարողանար հույս դնել, վոր պետութեանը կարող եր լրիվ ապահովել նրա կուլտուրական, կենցաղային և այլ կարիքները:

Մեր տնտեսական աճման հետ միաժամանակ անկատար կամ մենք առաջ ենք գնում դեպի բարրութեան այդ մակարդակը, բայց դեռ շատ հեռու չենք այդ մակարդակին հասնելուց: Ամեն մի աշխատավոր պետք ե խնայող լինի սպասելիք վորեւե արտակարգ դեպքի համար:

Պետական փոխառութեաններին համուրդով բաժանորդագրվելը, կապվելով համապետական շահերի հետ, հանդիսանում ե միեւնուէն ժամանակ խթան այն բանի, վոր յուրաքանչյուր վոք սահմանել ե իր անձնական կենցաղում եկոնոմիա և այդ եկոնոմիայի հաշվին խնայողութեաններ են արել:

Նախընթաց մասնաշաղկան փոխառութեանների փորձը ցույց տվեց, վոր պետութեանը ճիշտ ուղի ե բնորել-հենվելով հետագա խնայողութեանների վրա:

ՄԵՐ ՆԱԽԸՆԹԱՑ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. 1927 թ. ընթացքում բաց ե թողնված չերկու փոխառութեան՝ ինդուստրացման և գլուղացիական տնտե-

8

սութեան ամրացման փոխառութեան: Առաջինը 200 միլիոն ռուբլու, իսկ չերկրորդը՝ 150 միլիոն ռուբլու: Առաջինը գնել են գլխավորապես բանվորները և ծառայողները, իսկ չերկրորդը՝ գլուղացիները: Յերկու փոխառութեանն ել հաջող կերպով իրացված ե համարյա ամբողջ գումարով, ինչ գումարով վոր բաց եր թողնված: Բանվոր դասակարգի միջավայրում ինդուստրացման փոխառութեանը լավ ընդունելութեան ե գտել: Փոխառութեան իրացումն անցել ե հասարակական բարձր տրամադրութեան տակ, վորը ցույց ե տալիս, թե վորքան ինդուստրացման յոգունգը մոտ ե բանվոր դասակարգին: Մոտ 6 միլիոն բանվոր և ծառայող դարձել են ինդուստրացման փոխառութեան պահողներ, վորը լիովին իրացվեց չերկու ամսվա ընթացքում:

Մի փոքր ավելի դժվար ընթացավ գլուղացիական տնտեսութեան ամրացման փոխառութեան իրացումը — գլուղացիական այս առաջին մասնաշաղկան փոխառութեանը: Շնորհիվ այն հանգամանքի, վոր գլուղացիութեանը սովոր չեր արժեթղթերի, գլուղացիական տնտեսութեան ամրացման փոխառութեանը պահանջում եր բավականին ժամանակ և կապված եր լարված աշխատանքի հետ: Ընդամին մի քանի շրջաններում փոխառութեան իրացումը կապված եր նուէն իսկ ստիպողական միջոցների հետ, վորը միանգամաջն անթույլատրելից, վորովհետեւ գցում ե փոխառութեան հեղինակութեանը գլուղացիութեան աչքում և հակասում ե պետութեան քաղաքականութեանը: Պետութեան հրահանգներն այն մասին, վոր փոխառութեանը պետք ե իրացվի հոժարակամ սկզբունքների վրա, մի քանի վայրերում խեղաթուրվեցին և տեղական կազմակերպութեանները գուրս գալով ագիտացիայի և համոզման ձևերից սկսում ելին կիրառել վարչական ճնշման մեթոդներ: Սակայն, հենց վոր կառավարութեանն այս մասին իմացավ, միջոցներ ձեռք առավ, վորպեսզի իր հրահանգները տեղերում անշեղ կատարվե-

9

յին (ընկեր Ռիկովի և Բըշուխանովի նամակը, Ուկրաժնա-յում-ընկ. Պետրովսկուն) մեղավորները պատասխանատու-թյան լենթարկվեցին: Մինչև այժմ գյուղացիական տնտեսու-թյան ամրացման փոխառությունն իրացված է 135 միլի-ոն ռուբլու: Գյուղացիական տնտեսության ամրացման փո-խառության պարտատուներ պահող գյուղացիների թիվը կազմում է մոտ 10 միլիոն մարդ (ծուխ):

ՅԵԿՈՂ ՏԱՐՎԱ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԲԱՑ Ե ԹՈՂՆՎՈՒՄ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ 2-ՐԴ ՓՈԽԱ- ՌՈՒԹՅՈՒՆԸ

10. Յերկու փոխառությունների իրացումը մտցրել է ժողովրդական տնտեսության մեջ 350 միլիոն ռուբլի և հնարավորություն է տվել իրագործելու ընթացիկ տար-վա ինդուստրացման ծրագիրը:

Ինդուստրացման փոխառության մի քանի սերիաներ, մասնավորապես, ընդհանուր արժողությամբ 25 միլիոն ռուբլու, զնացել են հատկապես Դնեպրոստրոյի ֆինանսա-վորման վրա:

Վորպեսգի իրագործվի չեկող տարվա ինդուստրացման ծրագիրը (1928/29), վորն իր ծավալով զգալիորեն գե-րազանցում է ընթացիկ տարվա ծրագրին, կառավարու-թյունը բաց է թողնում նոր փոխառության «ինդուս-տրացման 2-րդ փոխառություն 500.000.000 ռուբլու» անունով: Այս փոխառությունը չեթե լրիվ իրացվի, կտա նոր կես միլիարդ ռուբլի Խ.Ս.Հ.Մ. ժողովրդական տնտե-սության ինդուստրացման համար:

10 ՏՈԿՈՍ ՄԱՍՀԱՆՎՈՒՄ Ե ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՍԱՐ

11. 10 տոկոս աճն գումարից, վորը կիրացվի վորևե շրջանում, կը մասնի տեղական գործկոմի բյուջեն՝ տեղա-կան կարիքները բավարարելու համար. տեղական նշանա-կություն ունեցող ձեռնարկությունների կառուցման, ճա-

10

նապարհների և կամուրջների վերանորոգության, բնակա-րանների, դպրոցների, հիվանդանոցների և կառուցման համար: Նման մասհանումներ կատարված են զավառակ-ների բյուջեների համար գյուղական տնտեսության ամ-րացման փոխառության ժամանակ և փոխառություն պա-հողները նրանց կենդանի որինակով կարող են համոզվել աճն բանում, թե ինչ նշանակութուն ունի տեղական տնտեսության համար փոխառության իրացումը: Ինդուս-տրացման 2-րդ փոխառությունից 10 տոկոսյա մասհա-նումները տեղական կարիքների համար կը կազմեն 50 միլիոն ռուբլի սա մի մեծ գումար է, վորը հնարավորու-թյուն կտա բավականաչափ բարձրացնելու գյուղական և քաղաքային բնակչության բարեկարգությունը և բավա-կանաչափ կը բարելավի տեղական տնտեսության դրու-թյունը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

12. Այս փոխառությունները, նախընթաց չերկու փոխառություններից զանազանելու համար, վորոնցից մեկը բաց եր թողնված քաղաքի, իսկ մյուսը՝ գյուղի հա-մար, բաց է թողնվում և գյուղի և քաղաքի համար: Այս կլինի բաժիս ամենայայն առումով «Միասնական բանվո-րա-գյուղացիական փոխառություն»: Այս բարձրացում է գյուղացիների աչքում փոխառության արժանիքը, վո-րովհետև գյուղացիությունը միմյե և այժմ համոզված էր, վոր գյուղացիական փոխառություններն ավելի քիչ են ձեռնտու, վոր նրանք «չերկրորդ տեսակի» չեն աճն փո-խառությունների համեմատությամբ, վորոնք բաց են թողնվում քաղաքի համար: Այս սխալ համոզումը կի ցրվի փոխառության իրացման ժամանակ և քաղաքում և գյու-ղում:

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՄԱՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼԱ- ՊԵՍ ՀՆԱՐԱՎՈՐ Ե

13. Փոխառությունը բաց է թողնվում 500 միլիոն

սուբյեկտ, այսինքն ավելի մեծ գումարի, քան թե նախընթաց յերկու փոխառությունները միասին վերցրած: Ուրիշ կերպ ել չի կարող լինել: Ինդուստրացման ծրագիրն աճում է տարեց-տարի, ուստի և տարեց-տարի պիտի աճի և այն գումարը, վորը դրվում է շինարարության մեջ: Չնայած վոր փոխառության գումարը խոշոր է, այնուամենայնիվ նրա իրացումը կատարելապես հնարավոր է:

Նախորդ փոխառությունները դեռ բոլորովին չեն կապել բանվորների և ծառայողների 40⁰/₀-ին և գյուղական տնտեսությունների կեսին: Բացի այդ, փոխառությունները շատ թույլ են տարածվել անկազմակերպ բնակչության, տնայնագործների, տնտեսուհիների միջև և այլն:

Յեթե սրանց բոլորին ել գրավենք գնելու նոր փոխառությունը և յեթե այսպիսով կարողանանք 100⁰/₀-ով բնդգրկել բոլոր աշխատավորներին, այն դեպքում փոխառությունն անկասկած փոշ միայն կծածկվի, այլ նույնիսկ կավելանա:

Նոր փոխառությունը, նախընթացի պես, պարտատոմսներ գնողներին տալիս է մի շարք ոգուտներ, ուստի և յուրաքանչյուր վոր, ով վոր իր խնայողությունները փոխ է տալիս պետության, զոհողություն չի անում: Ընդհակառակն, սրանով միաժամանակ միջոցներ է տալիս պետության ինդուստրացման համար, իսկ իր խնայողությունները ձեռնտու տեղ գնում:

ՊԱՐՏԱՏՈՄՍԸ ԱՐԺԵ 25 ՌՈՒԲԼԻ

14. Վորպեսզի գնահատեն փոխառության բոլոր ոգուտները, պետք է ծանոթանալ նրա պայմանների հետ: Յուրաքանչյուր պարտատոմսի արժեքը 25 ռուբլի է, բայց քանի վոր բոլորը չեն կարող գնել 25 ռուբլիանոց պարտատոմսեր, ուստի և պարտատոմսերը բաժանվում են 5

12

հափտար մասերի, յուրաքանչյուր մասը 5 ռուբլու արժողությամբ: Միևնույն պարտատոմսերի առանձին մասերը համարակալվում են միևնույն համարով և գնողին տալիս են այն ոգուտների մեկ հինգերորդ մասը, վորոնք կապված են ամբողջ պարտատոմսը տիրելու հետ: Պարտատոմսերի առանձին մասերը կարող են շրջանառության մեջ դրվել անկախ, այսինքն նրանց կարելի չե առանձին ծախել, գրավ գնել և այլն:

Այս փոխառության մեջ նոր բանն այն է, վոր

ՅԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆ Ե ԲԱՑ ԹՈՂՆՎՈՒՄ ՏՈԿՈՍԱԲԵՐ ԽԱՂԱՐԿՈՒ ՅԵՎ ԱՆՏՈԿՈՍ ԽԱՂԱՐԿՈՒ

15. Նորը փոխառությունը կայանում է նրանում, վոր նա բաժանվում է յերկու տեսակի՝ տոկոսաբեր-խաղարկու և անտոկոս խաղարկու: Տոկոսաբեր-խաղարկու փոխառության պարտատոմսերը պահողներին տալիս են և տոկոսային չեկամուտ և շահումներ: Նրանք հետևապես նման են ինդուստրացման առաջին փոխառության պարտատոմսերին Անտոկոս-խաղարկու փոխառության պարտատոմսերը տալիս են միմիայն շահում և հետևապես նման են 1926 թ. անտոկոս փոխառության պարտատոմսերին: Փոխառության այսպիսի կառուցումն ամեն մի բաժնեգրվողին հնարավորություն է տալիս ընտրելու այն փոխառության պարտատոմսերը, վորոնք նրան ավելի լեն դուր գալիս: Առաջներում բաց թողնված փոխառության փորձը ցույց տվեց, վոր շատ պարտատոմսեր պահողներին ավելի շատ հետաքրքրում է շահման հնարավորությունը, քան թե կայուն տոկոսային չեկամուտ ստանալը, իսկ մյուսները շահման հետ միաժամանակ ցանկանում են ստանալ, դեպքից անկախ չեկամուտ:

ՓՈՒԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՁԵՎԻ ՍԱՇՄԱՆՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ Ե ՅԵՐԿՈՒ ԽՄԲԻՆ ԵՆ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

16. Պետության վճարները փոխառության յերկու

13

տեսակի համար ել հավասար են—նրանք հավասար են տարեկան $11\frac{0}{10}$ -ի: Սակայն պետությունը տոկոսային խաղարկու փոխառության համար վճարում է կտրոններով, յուրաքանչյուր պարտատոմս ունեցողին $6\frac{0}{10}$ (ամեն մի 25 ուրբիանոց պարտատոմսին՝ 1 ո. 50 կ.) իսկ մընացած $5\frac{0}{10}$ (մոտ $12\frac{1}{2}$ միլիոն ուրբի փոխառություն) հատկացվում է շահումներին: Անտոկոս փոխառության մեջ ամբողջ 11 տոկոս ծախսվում է շահումները վճարելու համար. ուստի և բնական է, վոր անտոկոս-խաղարկու փոխառության համար սահմանված են ավելի շատ շահումներ, քան տոկոսային խաղարկու փոխառության համար:

ԿՏՐՈՆՆԵՐՈՎ ՏԱՐԵԿԱՆ 6 ՏՈԿՈՍ

17. Տօկոսարեր խաղարկու փոխառության տոկոսների չեկամուտը վճարվում է կտրոնով տարեկան $6\frac{0}{10}$ միանվագ անցած տարվա համար—1929 թ. սեպտեմբերի 1-ին: Հետևապես, 25 ուրբու արժողությամբ պարտատոմսը կտրոնով բերում է տարեկան 1 ո. 50 կ.: Վորովհետև փոխառությունը բաց է թողնված 10 տարով, ուստի և ամեն մի պարտատոմս ունի 10 կտրոն: Առաջին կտրոնի ժամկետը լրանում է 1929 թ. սեպտեմբերի 1-ին: Փողը կտրոններով կարելի չէ ստանալ 10 տարվա ընթացքում նրանց վճարման ժամկետը հասնելուց:

ՇԱՀՈՒՄՆԵՐ 100 ՌՈՒԲԼՈՒՑ ՄԻՆՁԵՎ 5000 ՌՈՒԲԼԻ

18. Ինդուստրացման 2-րդ փոխառության շահումները փոխառության չերկու ձևի համար ել սահմանված է 100 ուրբիանոց, 250 ո., 1000 ո. և 5000 ո. 1926 թ. անտոկոս փոխառության մեջ ամենամեծ շահումը կազմում եր 100,000 ո., ինդուստրացման 1-ին փոխառության մեջ 25,000 ուրբի: Սակայն, պարզվեց, վոր ընդ-

14

հանրապես պարտատոմսեր պահող աշխատավոր մասնա-ները խոշոր շահումներին բացասաբար են վերաբերվում: Նրանց կարծիքով ավելի նպատակահարմար է փոքրացնել շահումների չափը. բայց, ի հաշիվ այս փոքրացման, ավելացնել շահումների քանակը: Այսպես ել արվեց ինդուստրացման 2-րդ փոխառության համար. գլխավոր շահումի չափը բավականաչափ փոքրացված է, իսկ շահումների քանակը՝ մեծացված:

ՏԱՐԵԿԱՆ 4 ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ Ե

19. Ամեն մի փոխառության համար սահմանված է տարեկան 4-ական վիճակահանություն, իսկ վերջին տարին չերկու վիճակահանություն: Հետևապես, ընդամենը 10 տարվա ընթացքում պիտի կատարվի 38 վիճակահա-ն չերկու ձևի փոխառության վիճակահանությունները կատարվում են միաժամանակ: Վիճակահանություններում շահումների քանակը բաշխվում հետևյալ ձևով՝

1. ՏՈՎՈՍԱԲԵՐ-ԽԱՂԱՐԿՈՒ ՄԱՍԻ ՀԱՄԱՐ

1-8 ՄԻՆՉԵՎ 24-ՐԴ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ					29 32 ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ				
Յուրաքանչյուր շահումի չափը	Մասի յուրաք. կարգի համար		Ամբողջ մասի համար		Յուրաքանչյուր շահումի չափը	Մասի յուրաք. կարգի համար		Ամբողջ մասի համար	
	Շահումների քանակը	Գումարը	Շահումների քանակը	Գումարը		Շահումների քանակը	Գումարը	Շահումների քանակը	Գումարը
5,000	1	5,000	5	25,000	5,000	1	5,000	5	25,000
1,000	20	20,000	100	100,000	1,000	10	10,000	50	50,000
250	150	37,500	750	187,500	250	30	7,500	150	37,500
100	5,629	562,900	28,145	2,814,500	100	4,084	408,400	20,420	2,042,000
Ընդամ.	5,800	625,400	29,000	3,127,000	Ընդամ.	4,125	430,900	20,625	2,154,500
25-28 ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ					33-38 ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ				
5,000	1	5,000	5	25,000	5,000	1	5,000	5	25,000
1,000	15	15,000	75	75,000	1,000	5	5,000	25	25,000
250	50	12,500	250	62,500	250	15	3,750	75	18,750
100	4,759	475,900	23,795	2,379,500	100	2,704	270,400	13,520	1,352,000
Ընդամ.	4,825	508,400	24,125	2,542,000	Ընդամ.	2,725	284,150	13,625	1,420,750

2. ԱՆՏՈՎՈՍ ԽԱՂԱՐԿՈՒ ՄԱՍԻ ՀԱՄԱՐ

1-24 ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ					29-32 ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ				
Յուրաքանչյուր շահումի չափը	Մասի յուրաք. կարգի համար		Ամբողջ մասի համար		Յուրաքանչյուր շահումի չափը	Մասի յուրաք. կարգի համար		Ամբողջ մասի համար	
	Շահումների քանակը	Գումարը	Շահումների քանակը	Գումարը		Շահումների քանակը	Գումարը	Շահումների քանակը	Գումարը
5,000	2	10,000	10	50,000	5,000	1	5,000	5	25,000
1,000	40	40,000	200	200,000	1,000	15	15,000	75	75,000
250	300	75,000	1,500	375,000	250	50	12,500	250	62,500
100	11,858	1,185,800	59,290	5,929,000	100	7,859	785,900	39,295	3,929,500
Ընդամ.	12,200	1,310,800	61,000	6,554,000	Ընդամ.	7,925	818,400	39,625	4,092,000
25-28 ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ					33-38 ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԳԱՄ				
5,000	1	5,000	5	25,000	5,000	1	5,000	5	25,000
1,000	20	20,000	100	100,000	1,000	10	10,000	50	50,000
250	100	25,000	500	125,000	250	25	6,250	125	31,250
100	9,804	980,400	16,520	4,652,000	100	5,089	508,900	25,445	2,544,500
Ընդամ.	9,425	980,400	17,125	4,902,000	Ընդամ.	5,125	530,150	25,625	2,650,750



Ընդամենը բաց թողնված փոխառության 38 վիճակահանություններում 1,964,750 շահում 209,176,500 ուրբի:

Հետևապես 38 վիճակահանություններում ընդամենը պիտի խաղարկվի տոկոսաբեր խաղարկու բաց թողնված փոխառությամբ 956,750 շահում 102,358,500 ուրբի գումարի, իսկ անտոկոս խաղարկու բաց թողնված փոխառությամբ 1.964.750 շահում 209.176.500 ուրբի գումարի: չերկու փոխառությունը միասին 2 921.500 շահում 311.535 ուրբի:

Վերոլիստե Եւրաքանչյուր փոխառությունը պարտականում է 10.000.000 պարտատոմս (25 ուրբիանոց), հետևապես փոխառության ամբողջ ընթացքում տոկոսաբեր բաց թողնված փոխառության միջին հաշվով 10 պարտատոմսին ընկնում է մեկ շահում, իսկ անտոկոս բաց թողնված փոխառության 5 պարտատոմսին՝ 1 շահում:

20. Պարտատոմսին շահում ընկնելու դեպքում, պարտատոմսը մարվում է և այլևս չի մասնակցում հետևյալ վիճակահանություններում, իսկ նրան պահողին, բացի շահումից, վճարվում է պարտատոմսի արժեքը և տոկոսները, վերոնք աճել են կտրոնով մինչև վիճակահանության օրը: Պարտատոմսի տեքը, վորին ընկել է շահումը կարող է պարտատոմսը ներկայացնել վճարելու համար ցանկացած ժամանակը, բայց վոչ ուշ, քան 10 տարվա ընթացքում, վիճակահանությունը վերջանալուց հետո, վորի մեջ այդ պարտատոմսը շահել է:

1934 ԹՎԻՑ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՄԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Պարտատոմսերը, բացի շահումներով մարվելուց, սկսած 1934 թվից, պետք է տարեկան կատարվեն մարեցման 5 տիրած, վորոնցով պիտի մարվեն Եւրաքան-

18

չյուր փոխառության պարտատոմսերը հետևյալ գումարներին՝ առաջին չերկու վիճակահանությունում 31,250.000-ական ուրբի Եւրաքանչյուրում, իսկ մնացած չերեք վիճակահանությունում 62.500.000-ական ուրբի Եւրաքանչյուրում: 1934 թվից սկսած փոխառությունը Եւրաքանչյուր տարի մաս-մաս հանգցնելու հետևանքով, հենց այդ ժամանակվանից ել նվազում է շահումների քանակը և նրանց գումարը: Ընդ սմին սակայն, շահումների գումարների և փոխառության չմարված մասի գումարների հարաբերությունը մնում է անփոփոխ, այդ իսկ պատճառով, չնայած վոր նվազում են շահումների թիվը, շահման շանսերը չեն նվազում:

ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ 2-ՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՃԱՌԵԼԻ ՅԵ

22. Թեկուզ փոխառությունը բաց է թողնված 10 տարվա համար (1928 թ. սեպտեմբերի 1-ից 1938 թ. սեպտեմբերի 1-ը) բայց այդ չի նշանակում, վոր միայն տաս տարի անցնելուց հետո կարելի չե պետությունից հետ ստանալ նրան փոխ տված փողը: Ամեն մի պարտատոմս ունեցող այս ժամկետը լրանալուց առաջ ել հնարավորություն ունի ցանակացած ժամանակ իր պարտատոմսերը վերածել կանխիկ փողի: Նա կարող է այն ծախել բանկին, կամ խնայողական գրամարկին, իսկ փողի ժամանակավոր կարիք ունենալու դեպքում, նա կարող է իր պարտատոմսը զրավ գնել, չկորցնելով տոկոսային չեկամուտ ստանալու և պարտատոմսին ընկնելիք շահի իրավունքները: Պարտատոմսն ազատ կանխիկ փողի վերածելու հնարավորությունը կոչվում է փոխառության վաճառելիություն: Կարելի չե ասել, վոր ինդուստրացման 2-րդ փոխառությունը կատարելապես կարող է վաճառելի լինել: Նրա վաճառելիությունը կը սահմանվի միայն փոխառությունն իրացնելուց հետո:

23. Ինդուստրացման 2-րդ փոխառության պարտա-

19

տոմսերը, սրանց յեկամուտը—տոկոսներով և շահումնե-
րով, անկախ նրանց չափից, ինչպես նաև փոխառության
պարտատոմսերի գործարքները (գնելը, վաճառելը, գրավ
դնելը) ապավում են բոլոր ինչպես համապետական,
նախնայեա և տեղական հարկերից և տուրքերից: Ուստի
և յեթե ինգուստրացիոն 2-րդ փոխառության պարտա-
տոմսին շահում է ընկնում, թեկուզ 5000 ռուբլի, այն
դեպքում շահած պարտատոմսի տերը չի հարկադրվում
յեկամտային հարկով, այն պայմանով, ի հարկե, յեթե
շահումով առևտուր չանե, կամ արդյունաբերական ձեռ-
նարկություն չպահե վարձու աշխատանքը շահագործե-
լով և այլն: Վերջին դեպքում նա պարտավոր է վճարել
և յեկամտային և ուրիշ հարկեր ուրիշներին հավասար:

ԻՐԱՑՄԱՆ ԱՐՏՈՆՅԱԼ ՇՐՋԱՆԸ—ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՁԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ը, 1928 Ք.:

24. Փոխառության իրացումը սկսվում է 1928 թ.
սեպտեմբերի 1-ից ամենուրեք՝ և քաղաքում և գյուղում:
Յերկու ամսվա ընթացքում, այսինքն մինչև ս/թ նոյեմ-
բերի 1-ը, սահմանվում է բաժանորդագրվելու արտոնյալ
շրջան, վորի ընթացքում կարելի չե պարտատոմսերը ձեռք
բերել արտոնյալ պայմաններով: 1928 թ. նոյեմբերի 1-ից
պարտատոմսերը արտոնյալ գնով վաճառելը կդադարեցվի
և այս թվից հետո հետագա վաճառքը կը կատարեն բան-
կերը և խնայողական դրամարկղները բորսայի սահ-
մանած գներով:

Արտոնությունները կայանում են հետևյալում՝ առաջինը՝
զեղջ նրանց, վորոնք ցանկանում են պարտատոմսերը գնել
կանխիկ դրամով և յերկրորդ՝ համուրդ նրանց, վորոնք
ցանկանում են պարտատոմսերի արժեքը վճարելու մաս
— մաս:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՁԵՂ- ՁՈՎ

25. Այն անձնավորությունները, վորոնք փոխառու-

20

թյունը գնում են կանխիկ դրամով, ամեն մի լրիվ պար-
տատոմսի համար ստանում են զեղջ 50 կոպեկ և 10 կ.
պարտատոմսի 1/5 մասի համար: Այս զեղջն արվում է
պարտատոմսի տեղեկատու գնից գնման ուր: Տեղեկատու
գինը՝ դա անվանական գինն է (վորը նշանակված է պար-
տատոմսի վրա) վրան ավելացրած այն յեկամուտը, վորը
տեղեկատվ հաշված է գնման ուրվա համար, այսինքն տո-
կոսաբեր խաղարկու փոխառության համար ընթացիկ կրու-
րոնով տոկոսները, վորոնք արդեն կարողացել են աճել
ս/թ սեպտեմբերի 1-ից և շահումները, իսկ անտոկոս-խա-
ղարկու փոխառության համար միայն շահումները:

Մինչ պարտատոմսի անվանական արժեքը մնում է
անփոփոխ (25 ռուբ. լրիվ պարտատոմսի համար և 5 ռու-
բլի 1/5 մասի համար) տեղեկատու գինն սկսում է բարձ-
րանալ, վորքան նա հեռանում է 1928 թ. սեպտեմբերի
1-ից, վորովհետև ամեն ուր մեծանում է աճող յեկամտի
գումարը:

Այդ պատճառով ավելի ձեռնտու չե պարտատոմսերը
գնել հնարավորության չափ կանուխ, նրանց վաճառման
սկզբին:

Գյուղում կանխիկ փողով պարտատոմսեր գնողների
համար սահմանված է հատուկ արտոնություն, այն է՝
նրանց համար զեղջ արվում է վոչ թե տեղեկատու գնից,
այլ անվանական գնից, ուստի և գյուղական գնող-
ներին, վոր որն ել կատարվելու լինի վաճառումը,
պարտատոմսերը բաց են թողնվում (զեղջից հետո) չու-
րաքանչյուրը 24 ո. 50 կոպեկով լրիվ պարտատոմսի հա-
մար և 4 ո. 90 կոպ, 1/5 մասի համար:

Պարտատոմսերի կանխիկ փողով վաճառելը կատար-
վում է բոլոր բանկներում, խնայողական դրամարկղ-
ներում, փոստ-հեռագրական հիմնարկություններում, գյու-
ղատնտեսական վարկային կոոպերացիա հիմնարկություն-

ներում, առանձին կոնտրագենտների՝ վորոնք մասնակցում են փոխառության իրացմանը:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՆՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՒՄ Ե Յ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄ

26. Համուրդով վաճառքը յերկու տեսակ է լինում՝ 3 ամիս համուրդով և 8 ամիս համուրդով, 3 ամիս համուրդով կարող են ոգտվել բոլոր քաղաքացիներն, առանց բացառության. սա կոչվում է անհատական համուրդ: Յեռամսյա համուրդի դեպքում յուրաքանչյուր 25 ուրլիանոց պարտատոմսի համար պետք է կատարվեն չորս առանձին մուծումներ, վորոնք կատարվում են հետևյալ ժամկետներում. —

- | | | | | | |
|------|---------|------------|------------|-----------|--------------------|
| 1-ին | մուծում | 7 ա. 50 կ. | 1-ը | նոյեմբերի | 1928 թ. |
| 2-րդ | » | » | 7 ա. 50 կ. | » 1-ը | դեկտեմբերի 1928 թ. |
| 3-րդ | » | » | 5 ա. | » 1-ը | հունվարի 1928 թ. |
| 4-րդ | » | » | 5 ա. | » 1-ը | փետրվարի 1929 թ. |

Անհատական պայմանաժամի դեպքում նույնպես, ինչպես և կանխիկ փողով գներու դեպքում, պարտատոմսերը բաց են թողնվում փոչ թե անվանական, այլ տեղեկատու գնով: Այդ պատճառով, առաջին վճարի հետ միաժամանակ բաժանորդը պետք է վճարի, բացի 7 ա. 50 կ. և անվանական և տեղեկատու գների միջև չեղած տարբերությունը: Այս տարբերությունն ամեն ոք աճում է, վորքան հեռանում ենք 1928 թ, սեպտեմբեր 1-ից. ուստի և գնողին ավելի ձեռնտու չե մուծումը կատարել վորքան հնարավոր է շուտ. ևս առավել, վոր 1-ին մուծման ուրից ընթացիկ կուպոնի տոկոսները (տոկոսաբեր-խազարկու փոխառության համար) գնում են հոգուտ գնողի:

Յերկրորդ վճարի դեպքում բաժանորդի վրա հաստատվում է պարտատոմսի №-ը, վորովհետև առաջին վիճակահանությունը պիտի կատարվի 1928 թ. դեկտեմբերին, հետևապես, բաժանորդը դեռ մինչև պարտատոմսի լրիվ

22

արժեքը վճարելը արդեն մասնակցում է առաջին վիճակահանություն: Այս դեպքում չեթե պարտատոմսի շահում է ընկնում—գնում է հոգուտ բաժանորդի:

Փոխառությանը բաժանորդագրվել անհատապես 3 ամիս համուրդով կարելի չե բոլոր այն հիմնարկություններում, վորտեղ կարելի չե կանխիկ փողով պարտատոմսեր գներ: Գյուղում համուրդով գնողները ոգտվում են այն արտոնությունք ինչպես և գյուղում կանխիկ գրամով գնողները, այսինքն նրանց բաց է թողնվում պարտատոմսեր փոչ թե տեղեկատու, այլ անվանական գնով: Այդ պատճառով բաժանորդագրման դեպքում 7 ա. 50 կ. վճարից ավելի փոչ մի լրացուրիչ վճար չեն վճարում:

Կուլեկտիվ բաժանորդագրման դեպքում արվում է 8 ամիս համուրդ:

27. Ամենամեծ արտոնությունները արվում են կուլեկտիվ բաժանորդագրման դեպքում: Առաջին արտոնությունն այն է, վոր վճարման համուրդը սահմանված է է 8 ամիս (մուծում). վճարների ժամկետները և չափերը սահմանվում են հետևյալ ձևով (մի լրիվ պարտատոմսի համար)

- | | | | | | |
|-----------|----------|------------|------|-----------|------------------|
| 1-ին մեծ. | գումարով | 2 ա. մինչև | 1-ը | նոյեմբերի | 1928 թ. |
| 2-րդ | » | » | 2 ա. | » 1-ը | դեկտեմբ. 1928 թ. |
| 3-րդ | » | » | 3 ա. | » 1-ը | հունվարի 1929 թ. |
| 4-րդ | » | » | 3 ա. | » 1-ը | փետրվ. 1929 թ. |
| 5-րդ | » | » | 3 ա. | » 1-ը | մարտի 1929 թ. |
| 6-րդ | » | » | 3 ա. | » 1-ը | ապրելի 1929 թ. |
| 7-րդ | » | » | 3 ա. | » 1-ը | մայիսի 1929 թ. |
| 8-րդ | » | » | 3 ա. | » 1-ը | հունիսի 1929 թ. |
| 9-րդ | » | » | 3 ա. | » 1-ը | հուլիսի 1929 թ. |

Պարտատոմսերի 1/5 մասի համար բաժանորդագրվելու դեպքում յուրաքանչյուր վճարի չափի համապատասխան կազմում է ցույց տված գումարների 1/5-ը իսկ

23

ժամկետները մնում են նույնը (առաջին չերկու վճարը 40-ական կոպեկ, իսկ հետևյալ 7 վճարը — 60-ական կոպեկ)։

Յերկրորդ արտոնությունը կոլլեկտիվ բաժանորդագրության դեպքում այն է, վոր պարտատոմսը բաց է թողնելովում անվանական գնով։ Այդ պատճառով վոչ միայն առաջին մուծումից հետո աճող տոկոսներին են գնում հոգուտ գնողի, այլ և այն, վորոնք մինչև մուծման որն աճել են ընթացիկ կարոններով։ Պարտատոմսի համարները հաստատվում են բաժանորդների վրա չերկրորդ վճարից հետո։ Բայց վորովհետև մինչև 1929 թ. հուլիսի 1-ը պիտի անցկացվեն 3 վիճակահանություն, հետևապես կոլլեկտիվ բաժանորդները մինչև վոր կվճարեն իրենց պարտատոմսերի լրիվ արժեքը, արդեն մասնակցում են շահումների 3 վիճակահանության։ Այն շահումները, վորոնք կնկնեն այդ պարտատոմսերի վրա, պատկանում են բաժանորդներին։ Այդ բոլորը չենթադրվում են այն դեպքերում, չեթե բաժանորդները ճշգրիտ մուծում են վճարները հենց վոր լրանում է ժամկետը։

ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԲՆԱԿ-ԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

28. Կոլլեկտիվ բաժանորդագրությունը, ըստ չերեվութին, պարտատոմսեր ձեռք բերելու ամենաձեռնառու միջոցն է։ Կոլլեկտիվ բաժանորդագրության ճանապարհով կարող են պարտատոմսեր ձեռք բերել նույնիսկ նրանք, վորոնք ունեն շատ փոքր խնայողություն և նրանք վորոնք փոխառություն ձեռք բերելու համար կարող են կտրել իրենց աշխատավարձից միայն մի փոքր գումար։ Կոլլեկտիվ բաժանորդագրության մասնակցելու համար թույլատրում է քաղաքի ամբողջ աշխատավոր բնակչության, գյուղերում — ամբողջ գյուղացիությանը, վորոնք մտնում են աշխատավորական միությունների մեջ։ Կոո-

24

պերատիվների և ամեն տեսակի ընկերությունների, գյուղ-կոմսների և այլն։ Բանվորները և ծառայողները կարող են բաժանորդագրվել իրենց ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների միջոցով։ անաջադրծները և ազատ պրոֆեսիայի անձնավորությունները, իրենց արտերների և կոլլեկտիվների միջոցով, անկազմակերպ քաղաքային բնակչությունը, վորն ուշադրում է ընտրական իրավունքներով, տնտեսուհիները, սոցիալապես հովանավորվողները և այլն անային վարչության և բնակարանային ընկերությունների միջոցով, իսկ մասնավոր աներում՝ լիազորի միջոցով, վորն ընտրվում է տնկեցների կողմից։ գյուղացիներն իրենց աշխատավորական միությունների միջոցով։ Համուրդով գնողները, չեթե վորեւ վճար չեն մուծել սահմանված ժամկետին, զրկվում են պարտատոմս ստանալու իրավունքից։

Սակայն այն փողը, վորն արդեն վճարվում է պարտատոմսի համար, չի կորչում, այլ վերադարձվում է հետ ժամկետը լրանալուց հետո, վորը սահմանված եր համուրդի համար, այսինքն 1929 թ. փետրվարի 1-ից անհատական բաժանորդների համար և 1929 թ. հուլիսի 1-ից հավաքական բաժանորդների համար։

ՆԱԽՈՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՊԵՏԲ Ե ՊԱՇԵԼ

29. Բանվորները և գյուղացիներն իրենց նշանակալից մասնաշում հանդիսանում են պետական փոխառության պահողները, հատկապես ինդուստրացման 1-ին փոխառության և գյուղական տնտեսության ամրացման փոխառության։ Իր ժամանակին նրանք փոխ են տվել արդեն պետության ինդուստրացման գործի համար։

Գնելով նոր փոխառություն և կրկին փոխ տալով պետության, նրանք չպիտի ծախեն նախորդ փոխառությունների պարտատոմսերը, վորովհետև պետությունը

25

ժամկետից առաջ վերադարձնելով իրեն ծախվող պարտատոմսերի փողը, բնականորեն ստիպված կլինի նվազեցնել շինարարության թափը. պարտատոմսեր պահողը պարտատոմսը ծախելու դեպքում զրկվում է այն ոգուտներից, փորոնք կապված են պարտատոմսերը տիրելու հետ: Այդ պատճառով, ամեն մի փոխառություն պահող և հանուն պետության շահերի և հանուն իր սեփական շահերի, պիտի պահե նախկինները, չեթե գնում ենուր փոխառություն:

ՓՈՒ ԵՍ ՏԱԼԻՍ ՊԵՏՈՒՅՅԱՆ ՄԻ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԴ ԻՆԴՈՒՍՏՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

30. Ամեն մի աշխատավոր պետք է իմանա, վոր նոր բաց թողնված փոխառության հաջողությունը՝ մեր սոցիալիստական շինարարության յերաշխիքն է, ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում: Փոխառության հաջողությունը կախված է հենց մեզնից: Մեզնից յուրաքանչյուրի պարտքն է՝ գնել պարտատոմսեր և դրա մեջ համոզել նույնպես և ուրիշներին: Առաջավոր պրոլետարների կողմից առաջ է քաշված «Փոխ ես տալիս պետության ինդուստրացման գործի համար մի ամսվա աշխատավարձը» լոզունգը: Այդ լոզունգը պետք է մեզնից յուրաքանչյուրի մեջ կենդանի արձագանք գտնե և այն ժամանակ փոխառությունը լրիվ կծածկվի և նոր կես միլիարդ ուղբլին կը գնա ինդուստրացման գործի վրա:



ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպլար 838 գ. Պատ. № 4446 Տիրաժ 600

ՀՀ Ազգային գրադարան



NL0207084

27923